ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 314 -Ա

« 20 » ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024Թ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 27-Ի ԹԻՎ 270-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. ««ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին» ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2024 թվականի օգոստոսի 27-ի թիվ 270-Ա որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին կետով.

«1.1. Հիմք ընդունելով ««ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հասցեի փոփոխությունը՝ «ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության դպրոցի նոր գտնվելու վայր և իրավաբանական (փոստային) հասցե սահմանել ՀՀ Վայոց ձորի մարզ, Եղեգնաձոր համայնք, Եղեգնաձոր քաղաք (3601), Վ. Գևորգյան փողոց, շենք 4 հասցեն:»:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

ք. Եղեգնաձոր